

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՏԵՓԱՆՑԱՆ ԼԻԼԻԹ ԿԱՐՈՑԻ

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍԹՐԵՍԻՆ ՏՐՎՈՂ ՔՈՓԻՆԳ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

հոգեբանական գիտությունների թեկնածու

Լևոն Կարոյի Սարգսյան

Պաշտոնական

հոգեբանական գիտությունների դոկտոր

ընդդիմախոսներ՝

Նաիրա Ռաֆիկի Հակոբյան

հոգեբանական գիտությունների թեկնածու

Հրաչյա Ռաֆիկի Հովհաննիսյան

Առաջատար

ՀՀ Պետական կառավարման ակադեմիա

կազմակերպություն՝


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի
20-ին ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ
ԲԿԳԿ հոգեբանության 067 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթնալ Երևանի պետական
համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 20.01.2026 թ.:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Դավիթ Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Պատերազմի մասնակիցների սթրեսին տրվող քրոֆինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունն արդիական է՝ պայմանավորված մեր երկրի վերջին տասնամյակների ընթացքում ապրած բազմաթիվ ռազմական հակամարտություններով: Այս հակամարտությունները խոր հետք են թողել հասարակության հոգեբանական վիճակի վրա՝ առաջացնելով հետտրավմատիկ սթրեսային խանգարում, սթրեսակայունության անկում և արժեքային կողմնորոշումների վերաիմաստավորման խնդիրներ: Քրոֆինգ ռազմավարությունների ուսումնասիրությունը կարևոր է՝ հասկանալու, թե ինչպես են անհատները հակզադում և հարմարվում ծայրահեղ սթրեսին և վերականգնում հոգեբանական կայունությունը: Հայաստանի սոցիալ-մշակութային համատեքստում, որտեղ հասարակական կապերն ու ավանդույթները կարևոր դեր են խաղում անձի կյանքում, այս ռազմավարությունները յուրահատուկ առանձնահատկություններ են ձեռք բերում:

Այս տեսանկյունից հետազոտությունն ընդգծում է հետտրավմատիկ անձնային աճի (ՀՏԱ) դերը, որը կարող է խթանել դրական հոգեբանական փոփոխություններ: ՀՏԱ-ի և քրոֆինգ ռազմավարությունների փոխկապակցվածության ուսումնասիրությունը կարևորում ենք՝ հասկանալու, թե ինչպես են մարդիկ իմաստ և նպատակ գտնում տրավմատիկ փորձառություններից հետո: Արժեքային կողմնորոշումների ազդեցությունը ռազմավարությունների ընտրության վրա արդիական է, քանի որ արտացոլում է հայ մշակույթի առանձնահատկությունները:

Քրոֆինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունն օգնում է հասկանալ, թե ինչպես են անհատները հարմարվում ճգնաժամային իրավիճակներին: Այս գիտելիքը կարևոր է հոգեբանական ծառայությունների արդյունավետության բարձրացման համար:

Հետազոտության նպատակը՝ սթրեսային իրադրություններում պատերազմի մասնակիցների քրոֆինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումն է:

Հետազոտության օբյեկտը՝ անձի քրոֆինգ ռազմավարություններն են:

Հետազոտության առարկան՝ սթրեսային իրադրություններում պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարություններն են:

Հետազոտության նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսուժաստիքել սթրեսի, հետփաստվածքային սթրեսային խանգարման (ՀՏՄ) էությունը, դրա դրսևորումները և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

2. Վերլուծել պատերազմի ազդեցությունը որպես ծայրահեղ սթրեսային իրողություն՝ անձի և խմբերի հոգեբանական վիճակի վրա:

3. Ուսուժաստիքել պատերազմի մասնակիցների մոտ տրավմայի հոգեբանական և սոցիալական հետևանքները, ներառյալ ՀՏՄ-ն և հետտրավմատիկ անձնային աճը (ՀՏԱ):

4. Բացահայտել պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների էությունը, հաշվի առնելով սոցիալ-մշակութային և անհատական գործոնները:

5. Կիրառել կոմբինացիոն վերլուծություն (MANCOVA)՝ բացահայտելու գործոնների ազդեցությունը պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների վրա:

6. Օգտագործել համահարաբերակցային վերլուծություն՝ պարզելու սթրեսակայունության, ՀՏԱ-ի և արժեքային կողմնորոշումների կապը քոփինգ ռազմավարությունների հետ:

7. Առաջարկել գործնական առաջարկություններ պատերազմի մասնակիցների հոգեբանական վերականգնման և սոցիալական աջակցության համար:

Հետազոտության վարկածը. Ենթադրվում է, որ պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունները տարբերվում են պատերազմին չմասնակցած անձանց քոփինգ ռազմավարություններից, և այդ տարբերությունները պայմանավորված են հետտրավմատիկ սթրեսի մակարդակով, հետտրավմատիկ աճով, արժեքային կողմնորոշումներով և սթրեսակայունությամբ:

1. Պատերազմական գործողությունների տարբերություններով պայմանավորված՝ մասնակիցների քոփինգ ռազմավարությունները զգալիորեն տարբերվում են միմյանցից:

2. Հետտրավմատիկ աճի բարձր ցուցանիշներ ունեցող մասնակիցները ցուցաբերում են առավել հարմարվողական քոփինգ ռազմավարություններ:

3. Մթրեսակայունության մակարդակն ուղիղ համեմատական է արդյունավետ քոփինգ ռազմավարությունների կիրառմանը:

4. Պատերազմի մասնակիցների արժեքային կողմնորոշումները միջնորդավորում են քոփինգ ռազմավարությունների ընտրությունը:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը.

Հետազոտությունը հիմնվում է անհատական մոտեցման սկզբունքի վրա, ինչից ելնելով գտնում ենք, որ անձի անհատականությունն է մեծապես պայմանավորում սթրեսին տրվող քոփինգ ռազմավարությունները, դետերմինիզմի սկզբունքը, որով բացատրում ենք սթրեսում պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարության դրսևորման պատճառահետևանքային կապերը, համակարգայնության սկզբունքը՝ սթրեսին տրվող քոփինգ ռազմավարությունները պայմանավորված են ոչ թե մեկ, այլ գործոնների համակարգով:

Աշխատանքի տեսամեթոդաբանական հիմք են կազմում Հ. Մելլեի կենսաբանական տեսությունը, որն ընդգծում է սթրեսի որպես օրգանիզմի համընդհանուր ադապտացիոն պատասխանի դերը, Ս. Հոբֆոլի ռեսուրսների պահպանման տեսությունը, ըստ որի սթրեսն առաջանում է, երբ սպառվում են ռեսուրսները: Հիմնվել ենք նաև Կիտան-Մմիկի տեսության վրա, որը լրացնում է դասական սթրեսի տեսությունները՝ ավելացնելով հոգեբանական և սոցիալական բաղադրիչներ Մելլեի սթրեսի ֆիզիոլոգիական մոդելին և Հոբֆոլի ռեսուրսների տեսությունը: Մյուսը՝ անձի քոփինգ ռազմավարությունն է հոգեբանական սթրեսի ներքո. արևմտյան հոգեբանության մեջ՝ Ռ. Լազարուսի, Է. Հեյմի, Ն. Հասնի, Ա. Բիլինգսի, Ռ. Մուսի, Ս. Ֆոլկմանի, Ք. Վորտմանի հայեցակարգերը, ռուսական հոգեբանության մեջ՝ Կ. Պլատոնովի, Բ. Տեպլովի, Լ. Անցիֆերովայի, Ռ. Նազիրովի, Վ. Յալտոնսկու, Ա. Բորոդինայի ուսումնասիրությունները:

Հետազոտության մեթոդները և ընտրանքը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են տեսական և էմպիրիկ տվյալների հավաքագրման, վերլուծության և մեկնաբանման որակական և քանակական մեթոդներ: Տվյալների հավաքագրման համար օգտագործվել են թեստավորումը, հարցազրույցը: Հետազոտության համար օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները.

1. Միսիսիայան հարցաթերթիկ՝ մարտական հետզսավածքային սթրեսային խանգարումների (ՀՎՄԽ),
2. Հետտրավմատիկ աճի հարցարան (PTGI-Tedeschi & Calhoun),
3. «Քոփինգ ռազմավարություն» մեթոդիկա (Ռ. Լազարուս),
4. Բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց),
5. «Սթրեսակայունության մեթոդիկա» (Վ. Բոյկո):

Հետազոտությանը մասնակցել են 400 մարդ, որոնցից 200-ը մարտական գործողություններին մասնակցած, այդ թվում՝ 40-ը Արցախյան առաջին պատերազմի, 40-ը՝ Ապրիլյան քառօրյա պատերազմի, 40-ը՝ 44-օրյա պատերազմի, 40-ը՝ 2021-2023 մարտական գործողությունների, 40-ը՝ մարտական գործողությունների կրկնակի մասնակիցներ: Վերոնշյալը մեր հետազոտության փորձարարական խումբն է, հետազոտությանը մասնակցած մյուս 200-ը՝ մարտական գործողությունների չմասնակցածներն են որպես ստուգիչ խումբ:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտությունը ներկայացնում է նոր մոտեցում՝ ուսումնասիրելով պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները Հայաստանին բնորոշ յուրահատուկ սոցիալ-մշակութային տեսանկյունից: Այն առաջին անգամ համեմատում է տարբեր ռազմական հակամարտությունների մասնակիցների (Արցախյան առաջին պատերազմ, 44-օրյա պատերազմ, և այլն) քոփինգ ռազմավարությունները՝ բացահայտելով պատերազմի տեսակի ազդեցությունը: Հետազոտությունը նորություն է նաև ռազմավարությունների ընտրության մեջ արժեքային կողմնորոշումների միջնորդավորող դերի վերլուծելության առումով, ինչպես նաև ընդլայնում է գիտելիքները հետտրավմատիկ անձնային աճի և սթրեսակայունության փոխկապակցվածության մասին:

Հետազոտության տեսական նշանակությունը. Աշխատանքը հարստացնում է սթրեսի և քոփինգ ռազմավարությունների մասին տեսական գիտելիքները՝ կենտրոնանալով պատերազմի մասնակիցների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վրա: Այն խորացնում է պատերազմի՝ որպես ծայրահեղ սթրեսորի ազդեցության մասին պատկերացումները՝ ընդգծելով ՀՏՄ-ի և ՀՏԱ-ի դերը: Ուսումնասիրությունը նպաստում է արժեքային կողմնորոշումների և ռազմավարությունների փոխկապակցվածության տեսական ընկալմանը՝ հայ իրականության մեջ:

Հետազոտության կիրառական նշանակությունը. Հետազոտության արդյունքները հիմք են տալիս մշակելու հոգեբանական աջակցության ծրագրեր՝ ուղղված պատերազմի մասնակիցների վերականգնմանը: Այն առաջարկում է գործնական լուծումներ՝ բարձրացնելու պատերազմի մասնակիցների սթրեսակայունությունը և խթանելու հարմարողական ռազմավարությունները, ինչպես նաև կարող են օգտագործվել

հոգեբանական առողջության մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնող կրթական ծրագրերի մշակման ընթացքում, սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրերի զարգացման գործում՝ օգնելով պատերազմի մասնակիցների վերաինտեգրմանը հասարակություն:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Պատերազմի մասնակիցների քուֆինգ ռազմավարությունները (դրական վերազնահատում, ինքնատիրապետում)՝ պայմանավորված տրավմատիկ փորձով, ավելի կառուցողական են համեմատած պատերազմին չմասնակցածների:

2. Տարբեր պատերազմների մասնակիցների քուֆինգ ռազմավարությունները տարբերվում են:

3. Հետտրավմատիկ աճի բարձր ցուցանիշները պատերազմի մասնակիցների մոտ խթանում են ադապտիվ ռազմավարություններ, մինչդեռ դրանք պատերազմին չմասնակցածների մոտ հիմնականում կանխում են խուսափողական վարքը:

4. Մթերսակայունությունը պատերազմի մասնակիցների մոտ ուղիղ համեմատական է կառուցողական ռազմավարությունների կիրառմանը, սակայն չմասնակցածների մոտ այն կապված է նաև ոչ ադապտիվ ռազմավարության հետ:

5. Արժեքային կողմնորոշումները պատերազմի մասնակիցների մոտ միջնորդավորում են ռազմավարությունների ընտրությունը:

Տեսական և էմպիրիկ հետազոտությունների հուսալիությունն ու հրապարակայնությունն ապահովվում է հետևյալ չափորոշիչներով. վերլուծվել է դասական և ժամանակակից գիտական աշխատություններ: Ատենախոսության արդյունքներն ունեն հանրային ներկայացում (10 գիտական հրապարակումներ): Հիմնախնդրի առանձին դրույթներ ներկայացվել են միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության առանձին բաժիններ ներկայացվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նիստերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու տեսական և մեկ հետազոտական գլուխներից, գործնական առաջարկներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (188 հայերեն և օտարալեզու գրականության աղբյուրներ), հավելվածներից: Ատենախոսությունը ներառում է 10 աղյուսակ, և բաղկացած է 156 էջից:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, հետազոտական խնդիրները, հետազոտության ընտրակազմը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսագործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին «Մթրեսի հասկացությունը հոգեբանության մեջ, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Մթրեսի հոգեբանական բութագիրը, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված են գիտական գրականության մեջ առկա սթրեսի մեկնաբանության բազմաբնույթ սահմանումները և հայեցակարգերը: Մթրեսի բարդությունը և ձևերի բազմազանությունը կանխորոշում են այդ վիճակի ուսումնասիրության մոտեցումների բազմազանությունը: Մթրեսային փոփոխություններն առաջանում են սթրեսորի պատկերից հետո, որը սուբյեկտիվորեն ընկալվում է որպես սպառնալից, վտանգավոր, տհաճ, և դրան հաջորդող ինքնապահպանման մոտիվացիայի ակտուալիզացումից հետո: Այսինքն, բարդ իրադրությունները չեն փոխում մարդու վիճակն ուղղակիորեն, դրանց ազդեցությունը հոգեվիճակի վրա միջնորդավորված է մոտիվացիոն-անձնային առանձնահատկությունների ամբողջ համախմբով, իրադրության նկատմամբ վերաբերմունքով, հաղթահարման փորձով:

Երկրորդ՝ «Հետզսասվածքային սթրեսի սոցիալ-հոգեբանական դրսևորումները, առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված են հետզսասվածքային սթրեսի սահմանումները, մոտեցումները և հիմնական հայեցակարգերը: ՀՏՄ-ն համախտանիշ է, որն առաջանում է տարբեր պատճառների արդյունքում, որոնք պայմանավորված են կատարված իրադարձությունների բնույթով, տրավմատիզացված անձի և շրջապատի հատկությունների առանձնահատկություններով: Մթրեսի հաճախականությունը, լարվածությունը և ինտենսիվությունը, սոցիալական իրադրությունը, այցելուի կենսաբանական և անձնային առանձնահատկություններն այն գործոններն են, որոնք ազդում են ՀՏՄ-ի առաջացման վրա:

Երրորդ՝ **«Պատերազմը որպես սոցիալ-հոգեբանական սթրեսային իրողություն»** ենթագլխում վերլուծվում են անձի սոցիալ-հոգեբանական փոփոխությունները ճգնաժամային իրավիճակներում, որոնք առաջանում են արտակարգ իրավիճակների, և հատկապես պատերազմի ազդեցությամբ: Պատերազմը մարդկային համակեցության արտակարգ իրավիճակ է: Անսպասելիորեն ներխուժելով մարդկանց առօրյա կյանք, այն իր հետ բերում է մահ, ցավ, զանգվածային ավերածություններ, վիշտ և տառապանք, խաթարում անձի սովորական կենսակերպը, վերափոխում մոտիվացիոն արժեքային և բարոյական-ինաստային ոլորտը, խտացնում ժամանակային հեռանկարը, արգելափակում դոմինանտ կյանքի նպատակները, նեղացնում դրական հուզական դրսևորումների ոլորտը, փոխում անձնային և սոցիալական նույնականությունը:

Չորրորդ՝ **«Պատերազմի մասնակիցների տրավմատիզացիայի դրսևորումները»** ենթագլխը վերլուծում է տրավմատիկ իրավիճակների հետևանքներն ու դրսևորումները: Ներկայացվել են հոգետրավմայի ենթարկված անձանց վիճակի դինամիկայի հաջորդական փուլերը: Մարտական տրավմայի հատուկ հակազդումներն ու դրսևորումները բազմազան են. ՀՏՄԽ-ից բացի, կարող են զարգանալ կախվածություններ, դեպրեսիաներ, տազնապային խանգարումներ, սոցիալական դեզադապտացիա, գործազրկություն:

Աշխատանքի երկրորդ՝ **«Պատերազմի մասնակիցների քոփինգ հակազդումները, սոցիալ-հոգեբանական բնորոշումը»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Այս գլխի առաջին՝ **«Քոփինգ հակազդումների բնութագիրը»** ենթագլխում ներկայացվում է քոփինգ հակազդումների մեկնաբանությունները տարբեր հեղինակների կողմից: Քոփինգ հակազդումներն այն մեխանիզմներն են, որոնք մարդիկ օգտագործում են իրենց կյանքի տարբեր ճնշումներին և սթրեսորներին հակազդելու համար: Դրանք ընդգրկում են տարբեր արձագանքներ, որոնց միջոցով մարդիկ փորձում են կառավարել իրենց հոգեկան և ֆիզիկական վիճակը: Քոփինգ հակազդումները նպատակն է օպտիմալ կերպով նվազեցնել սթրեսի ազդեցությունը և օգնել վերականգնվել: Դրանք կարևոր դեր ունեն մարդու կյանքում, քանի որ օգնում են համակերպվել անընդհատ փոփոխվող արտաքին և ներքին հանգամանքների հետ:

Երկրորդ՝ **«Քոփինգ հակազդումների դասակարգումը»** ենթագլխում ներկայացվում են քոփինգների տարբեր

դասակարգումներ: Քուփինգ ռազմավարությունների վերաբերյալ տարբեր հեղինակների առաջարկած դասակարգումներն ընդգրկում են տարբեր մեթոդաբանական մոտեցումներ՝ կախված սթրեսի հաղթահարման տարբեր ռազմավարությունների բնույթից և կիրառելիությունից: Հեղինակների կողմից առաջարկվող քուփինգ ռազմավարությունների դասակարգումները ցույց են տալիս, որ սթրեսին դիմակայելը դինամիկ գործընթաց է, և ոչ մի ռազմավարություն չի կարող լինել ունիվերսալ: Բարձր արդյունավետություն ունեն այն մոտեցումները, որոնք համադրում են տարբեր մեթոդներ և կարող են հարմարվել կոնկրետ իրավիճակներին:

Երրորդ՝ **«Սթրեսին տրվող քուփինգ ռազմավարությունների մեկնաբանությունը հոգեբանության մեջ»** ենթագլխում ներկայացվում են կոնֆլիկտային, սթրեսային, անհանգստություն առաջացնող իրավիճակներում վարքի ռազմավարություններ: Սթրեսը և դժվարությունները չեն կարող ամբողջովին բացառվել կյանքից, ուստի մարդու պատրաստակամությունն ու ունակությունը արդյունավետ հակազդելու նրան կարող են նշանակալիորեն ազդել նրա ընդհանուր բարեկեցության և հոգեկան առողջության վրա:

Չորրորդ ենթագլխում՝ **«Պատերազմի մասնակիցների վարքի քուփինգ ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները»** ներկայացվում է մարտական գործողությունների մասնակիցների հաղթահարող և ինքնավերահսկող վարքի կամ քուփինգ ռազմավարության խնդիրը: Պատերազմի մասնակիցների համար սթրեսի դիմակայումը հաճախ պայմանավորված է նրանց անձնային գծերով, սոցիալական աջակցության մակարդակով և մշակութային համատեքստով: Ոմանք ընտրում են կառուցողական ռազմավարություններ, օրինակ՝ իմաստի որոնում կամ համայնքի հետ կապերի ամրապնդում, ինչը նպաստում է նրանց հոգեբանական վերականգնմանը: Մյուսները կարող են դիմել խուսափողական վարքի, ինչպիսիք են մեկուսացումը կամ ալկոհոլի օգտագործումը, ինչը կարող է խորացնել հետտրավմատիկ խնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ **«Պատերազմի մասնակիցների սթրեսին տրվող քուփինգ ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

«Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների և ընտրանքի նկարագրությունը» ենթագլխում ներկայացված են

հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, ընտրանքը, մեթոդներն ու մեթոդիկաները: Հետազոտությունը իրականացվել է 2023 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ընտրանքը ներառել է 400 անձ, որոնցից 200-ը մարտական գործողությունների մասնակիցներ (40-ը՝ Արցախյան առաջին պատերազմի, 40-ը՝ Սպրիդյան քառօրյա պատերազմի, 40-ը՝ 44-օրյա պատերազմի, 40-ը՝ 2021-2023 մարտական գործողությունների, 40-ը՝ կրկնակի մասնակիցներ), 200-ը՝ չմասնակցած՝ փորձարարական խումբ: Կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝ Միսիսիպյան հարցաթերթիկ մարտական հետժառավածքային սթրեսային խանգարումների, Հետտրավմատիկ անձնային աճի հարցարան (PTGI - Tedeschi & Calhoun), Ռ. Լազարուսի «Քոփինգ ռազմավարություն» մեթոդիկան, Բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց), Վ. Բոյկոյի «Մթերսակայունության մեթոդիկա», Շապիրո-Ուիլքի տվյալների նորմալ բաշխման բազմաչափ թեստ, Բազմաչափ կովարիացիոն վերլուծություն (MANCOVA): Մեթոդիկաների կիրառումից հետո իրականացվել է տվյալների նկարագրական և վիճակագրական վերլուծություն, համահարաբերակցային վերլուծություններ, ինչի հիման վրա տրվել են եզրակացություններ և առաջարկություններ:

Երկրորդ՝ «**Հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն**» ենթաբաժնում ներկայացված և վերլուծված են կիրառված մեթոդիկաներից ստացված տվյալները:

Հետազոտության շրջանակներում Միսսիսիպյան սանդղակի կիրառման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը:

Աղյուսակ 1. ՀՏՄԽ-ի ախտորոշման արդյունքները R1 (n= 200) և R2 (n= 200) խմբերում և R1-ի ենթախմբերում՝ R1a (n= 40), R1b (n= 40), R1c (n= 40), R1d (n= 40), R1e (n= 40)

ՀՏՄԽ-ի մակարդակ	R1	R2	R1a	R1b	R1c	R1d	R1e
Լավ ադապտացված	85 (42%,5)	140 (65%)	24 (60%)	10 (25%)	23 (57,5%)	11 (27,5%)	17 (42,5%)
Ադապտացիայի խանգարում	95 (48,5%)	50 (25%)	14 (35%)	25 (62,5%)	12 (30%)	22 (55%)	22 (55%)
ՀՏՄԽ	20 (10%)	10 (5%)	2 (5%)	5 (12,5%)	5 (12,5%)	7 (17,5%)	1 (2,5%)
Միջինացված տվյալներ	95,02	84,16	92,53	98,85	89,7	98,9	107,5
Ստանդարտ շեղումներ	18,64	19,5	12,56	16,25	18,49	16,19	13,57
Միջակայքեր	83	64	57	72	71	66	56

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ պատերազմի մասնակիցների (R1) և չմասնակիցների (R2) միջև կան էական տարբերություններ հոգեբանական հարմարման մակարդակում, ինչը պայմանավորված է մարտական տրավմատիկ փորձի ուղղակի ազդեցությամբ: R1 խմբում ՀՏՄԻ-ի բարձր տոկոսը (10%) և հարմարման խանգարման գերակշռումը (48.5%) հաստատում են, որ ռազմական գործողություններն առաջացնում են հոգեբանական լարվածության կուտակային էֆեկտ: R2 խմբում ՀՏՄԻ-ի առկայությունը (5%) ցույց է տալիս, որ ռազմական կոնֆլիկտների անուղղակի ազդեցությունը նույնպես կարող է հանգեցնել հոգեբանական խանգարումների:

Աղյուսակ 2. Հետտրավմատիկ անձնային աճի հարցարանի (ՀՏԱՀ)

միջինացված արդյունքները R1 (n= 200) և R2 (n= 200) խմբերում և R1-ի ենթախմբերում՝ R1a (n= 40), R1b (n= 40), R1c (n= 40), R1d (n= 40), R1e (n= 40)

Խումբ	R1	R2	R1a	R1b	R1c	R1d	R1e
ԱՈԻ	4,15	3,8	4,34	4,13	4,2	4	4
ԱՄՎ	4	3	3,57	3,15	4,55	3,26	3,15
ՆՀ	2,96	3,86	3,56	2,42	3,36	1,97	2,6
ՀՓ	3,9	3,64	4	4,1	3,7	4	4,15
ԿՄԲ	4,2	3,78	4,47	4,86	3,4	4,8	4,8
Ինտեգր	3,8	3,48	3,89	3,37	3,94	3,16	3,4
Միջակայք	2,81	2,52	2	1,81	2,57	1,57	1,81
Ստանդարտ շեղում	0,9	0,84	0,78	0,55	0,79	0,46	0,56

Ստացված արդյունքները վկայում են, որ պատերազմի մասնակիցները ցուցաբերում են ավելի մեծ անձնական ուժ, ինչը ցույց է տալիս նրանց ինքնավստահության և դժվարությունները հաղթահարելու կարողության աճը: Ի հակադրություն, մարտական գործողություններին չմասնակցած անձինք ավելի բարձր միավորներ են գրանցել նոր հնարավորությունների ընկալման մեջ: Պատերազմի մասնակիցների մոտ այլոց հանդեպ վերաբերմունքն ավելի դրական է, ինչն արտահայտվում է կարեկցանքի ուժեղացմամբ և սոցիալական կապերի բարելավման ձգտումով: R1-ի ենթախմբերում նկատվում է զգալի բազմազանություն, քանի որ տարբեր պատերազմների մասնակիցները ցուցաբերում են տարբեր մակարդակների հոգեբանական աճ: Պատերազմի մասնակիցների մոտ տրավմատիկ փորձը նպաստել է անձնական ուժի, սոցիալական կապերի ուժեղացմանը, սակայն նոր հնարավորությունների ընկալումը ժխտել է համեմատաբար ցածր: R1-ի ենթախմբերի միջև տարբերություններն

արտացոլում են պատերազմների տևողության, ինտենսիվության, ավարտի արդյունքի և ժամանակային հեռավորության ազդեցությունը: Այս արդյունքներն ընդգծում են, որ տրավմատիկ իրադարձությունները կարող են խթանել դրական հոգեբանական փոփոխություններ, սակայն դրանց բնույթը կախված է անհատական փորձառությունից:

Աղյուսակ 3. Քոփինգ ռազմավարությունների դրսևորման միջինացված տվյալները R1 (n= 200) և R2 (n= 200) խմբերում և R1-ի ենթախմբերում՝ R1a (n= 40), R1b (n= 40), R1c (n= 40), R1d (n= 40), R1e (n= 40)

№	Քոփինգ ռազմավարություններ	R1	R2	R1a	R1b	R1c	R1d	R1e
1.	Առճակատում	1,51	1,51	1,55	1,51	1,41	1,51	1,5
2.	Հեռավորություն	1,86	1,7	1,84	1,89	1,82	1,87	1,83
3.	Ինքնատիրապետում	2,1	1,85	2	2,1	2	2,1	2,1
4.	Սոց. աջակցության որոնում	1,62	2,1	1,54	1,65	1,6	1,68	1,62
5.	Պատասխանատվության ընդունում	1,57	1,4	1,45	1,53	1,51	1,53	1,69
6.	Փախուստ-Խուսափում	1,76	1,87	1,75	1,75	1,73	1,79	1,72
7.	Խնդրի լուծման պլանավորում	2,22	2	2,19	2,22	2,24	2,23	2,15
8.	Դրական վերագնահատում	2,1	1,77	2,1	2,1	2	2,1	2,0

Պատերազմի մասնակիցներն ավելի հաճախ են օգտագործում խնդրի լուծման պլանավորում և դրական վերագնահատում, ինչը վկայում է նրանց կողմից սթրեսը կառուցողականորեն վերահիմնարկելու և ռացիոնալ լուծումներ մշակելու միտման մասին: Ինքնատիրապետումը նույնպես ավելի բարձր է R1 խմբում, ինչը ցույց է տալիս հույզերի խիստ վերահսկողություն և օբյեկտիվ գնահատման ձգտում: Պատերազմի մասնակիցները հակված են կառուցողական ռազմավարություններին, իսկ R2 խումբն ավելի շատ է ապավինում սոցիալական աջակցությանը:

Աղյուսակ 4. Ը. Շվարցի «Բազային արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի միջինացված արդյունքները R1 (n= 200) և R2 (n= 200) խմբ. և R1-ի ենթախմբ.՝ R1a (n= 40), R1b (n= 40), R1c (n= 40), R1d (n= 40), R1e (n= 40)

№	Արժեքներ	R1	R2	R1a	R1b	R1c	R1d	R1e
1.	Կոնֆորմություն	4,45	4,6	4,4	4,08	4,59	4,3	4,05
2.	Ավանդականություն	3,85	4,1	3,76	3,61	4,09	3,5	3,53
3.	Կամեզոդություն	4,42	4,1	4,03	4,54	4,36	4,63	4,32
4.	Ունիվերսալիզմ	4,9	4,5	4,6	4,77	4,95	5,05	4,72
5.	Ինքնուրույնություն	5,1	4,78	4,63	5,37	5,12	5	5,23
6.	Հեղոնիզմ	3,88	3,42	3,61	3,77	3,87	4,67	3,43
7.	Ձեռքբերումներ	4,14	3,88	3,69	3,49	4,57	3,98	3,34
8.	Իշխանություն	3,52	3,1	3,12	3,29	3,67	3,42	3,1
9.	Անվտանգություն	5	5,1	4,58	4,84	5,18	4,76	4,8
10.	Ստիմուլյացիա	4,56	4,2	4,27	4,68	4,51	5	4,5

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ պատերազմի մասնակիցների (R1) և մարտական գործողություններին չմասնակցած անձանց (R2) արժեքային կողմնորոշումները տարբերվում են՝ արտացոլելով նրանց կյանքի փորձի ազդեցությունը: Պատերազմի մասնակիցներն ավելի շատ են կենտրոնանում ինքնուրույնության, ունիվերսալիզմի և կամեցողության վրա, մինչդեռ չմասնակցած անձանց խումբն առաջնորդվում է կոնֆորմությամբ և ավանդականությամբ: Այս տարբերությունները ցույց են տալիս, որ մարտական փորձը խորապես ազդում է արժեքային կողմնորոշումների վրա՝ խթանելով ինքնազարգացումը և հանդուրժողականությունը: Ուստի, տրավմատիկ փորձը կարող է վերաիմաստավորել անհատի արժեքային համակարգը՝ կախված անձնային և սոցիալական համատեքստից:

Աղյուսակ 5. Կ. Բոյկոյի սթեսակայունության մեթոդիկայի տվյալները R1 (n=200) և R2 (n=200) խմբերում և R1-ի ենթախմբերում՝ R1a (n=40), R1b (n=40), R1c (n=40), R1d (n=40), R1e (n=40)

Սթեսակայունություն	R1	R2	R1a	R1b	R1c	R1d	R1e
Բարձր (50-ից ավել)	37 (18.5%)	16 (8%)	11 (27.5%)	9 (22.5%)	10 (25%)	4 (10%)	3 (7.5%)
Միջին (12 - 49)	150 (75%)	153 (76.5%)	26 (65%)	30 (75%)	25 (62.5%)	34 (85%)	35 (87.5%)
Ցածր (11-ից ցածր)	13 (6.5%)	31 (15.5%)	3 (7.5%)	1 (2.5%)	5 (12.5%)	2 (5%)	2 (5%)
Միջին	30.18	23.47	34.55	31.28	32.03	28.25	27.54
Ստանդարտ շեղումներ	13.92	12.64	15.66	15.49	15.41	10.94	11.45
Միջակայքեր	53	53	52	52	51	52	50

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ պատերազմի մասնակիցները (R1) ընդհանուր առմամբ ավելի բարձր սթեսակայունություն ունեն, քան մարտական գործողություններին չմասնակցած անձինք (R2): Ընդհանուր առմամբ, մարտական փորձը, հատկապես ավելի վաղ ժամանակաշրջաններում, նպաստում է սթեսակայունության բարձրացմանը, մինչդեռ վերջին և կրկնակի մասնակցությունը կարող է խոցելիություն առաջացնել: Արդյունքները ցույց են տալիս, որ սթեսակայունությունը կախված է փորձի տևողությունից, ինտենսիվությունից և ժամանակային հեռավորությունից:

Հետազոտության հիմնական վարկածը ստուգելու համար կիրառել ենք բազմաչափ կոմպրիացիոն վերլուծություն R1 և R2 խմբերի միջև սթեսիս տրվող քոփինգ ռազմավարությունները համեմատելու

համար՝ վերահսկելով կովարիաները (ՀՏՄ, ՀՏԱ, սթրեսակայունություն, արժեքային կողմնորոշումներ): Պատերազմի մասնակիցների կառուցողական ռազմավարությունները, ինչպիսիք են՝ ինքնատիրապետումը և խնդրի լուծման պլանավորումը, գերակշռում են՝ պայմանավորված սթրեսակայունությամբ և ՀՏԱ-ով: Չմասնակցածների խմբում սոցիալական աջակցության որոնումը և փախուստ-խուսափումը ընդգծված են, ինչն արտացոլում է տրավմատիկ փորձի բացակայությունը: Արժեքային կողմնորոշումները չմասնակցածների խմբում, միջնորդավորում են ռազմավարությունների ընտրությունը:

Համահարաբերակցային վերլուծության արդյունքները՝ ստորև:

Աղյուսակ 6. R1 և R2 խմբերի սթրեսակայունության հետ քուփինգ ռազմավարությունների համահարաբերակցության մատրիցան (N=200)

Քուփինգ ռազմավարություն	R1			R2		
	rs	df	p	rs	df	P
Առճակատում	0,006	198	0,930	-0,009	198	0,900
Հեռավորություն	0,066	198	0,354	0,238***	198	<0,001
Ինքնատիրապետում	0,424***	198	<0,001	0,511***	198	<0,001
Սոցիալական աջակցություն	0,080	198	0,262	0,345***	198	<0,001
Պատասխանատվություն	0,381***	198	<0,001	-0,020	198	0,774
Փախուստ	0,072	198	0,314	-0,218**	198	0,002
Խնդրի լուծման պլանավորում	0,212**	198	0,003	-0,069	198	0,330
Դրական վերագնահատում	0,283***	198	<0,001	0,028	198	0,694

R1-ի ավելի բարձր սթրեսակայունությունը կապված է ակտիվ ռազմավարությունների հետ, մինչդեռ R2-ում այն ավելի սոցիալական է: Մեր լրացուցիչ վարկածը, որ սթրեսակայունության մակարդակը ուղիղ համեմատական է արդյունավետ քուփինգ ռազմավարությունների կիրառմանը, հաստատվում է R1-ում, որտեղ սթրեսակայունությունը խթանում է կառուցողական ռազմավարություններ, բայց մասամբ մերժվում է R2-ում, քանի որ այն կապված է նաև ոչ ադապտիվ հեռավորության հետ: R1-ի տրավմատիկ փորձը խթանում է արդյունավետ ռազմավարություններ, մինչդեռ R2-ում սթրեսակայունությունը նպաստում է սոցիալական, բայց ոչ միշտ արդյունավետ մոտեցումների:

Աղյուսակ 7. R1 և R2 խմբերի ՀՏԱ-ի հետ քուփինգ ռազմավարությունների համահարաբերակցության մատրիցան (N=200)

Քուփինգ ռազմավարություն	R1			R2		
	rs	df	p	rs	df	P
Առճակատում	-0,020	198	0,781	-0,110	198	0,121

Հեռավորություն	0,123	198	0,837	-0,018	198	0,800
Ինքնատիրապետում	0,424***	198	<0.001	-0,078	198	0,270
Սոցիալական աջակցություն	-0,014	198	0,843	0,041	198	0,561
Պատասխանատվություն	0,027	198	0,703	-0,082	198	0,250
Փախուստ	-0,017	198	0,815	-0,218**	198	0,002
Խնորի լուծման պլանավորում	0,002	198	0,979	-0,103	198	0,147
Դրական վերագնահատում	0,446***	198	<0.001	-0,106	198	0,136

Մեր լրացուցիչ վարկածը, որ ՀՏԱ-ի բարձր ցուցանիշներ ունեցող մասնակիցները ցուցաբերում են ավելի ադապտիվ քոփինգ ռազմավարություններ, հաստատվում է մասնակիցների խմբում, չմասնակցածների խմբում միայն մասամբ, քանի որ ՀՏԱ-ն կապված է միայն ոչ ադապտիվ ռազմավարությունների կրճատման հետ: Պատերազմի մասնակիցների խմբում տրավմայի ազդեցությունը խթանում է ՀՏԱ-ի և ադապտիվ ռազմավարությունների կապը, մինչդեռ չմասնակցածների խմբում այդ ազդեցությունը սահմանափակ է:

Աղյուսակ 8. R1 և R2 խմբերի արժեքային կողմնորոշումների հետ քոփինգ ռազմավարությունների նշանակալից համահարաբերակցությունների մատրիցան (N=200)

Քոփինգ ռազմավարություն	R1			R2		
	rs	df	p	rs	df	P
Պատասխանատվություն + կոնֆորմություն	-0,162*	198	0,022	0,032	198	0,650
Դրական վերագնահատում + ունիվերսալիզմ	0,180*	198	0,011	-0,137	198	0,053

Արդյունքները վկայում են, որ էքստրեմալ փորձառությունները (պատերազմ) ուժեղացնում են արժեքային համակարգի և հոգեբանական ադապտացիայի միջև կապը: Միջնորդավորման մեխանիզմները գործում են պայմանական կերպով՝ կախված անհատի փորձառության ինտենսիվությունից: Մարտական փորձը հանդես է գալիս որպես կարևոր միջնորդ, որը կապում է սթրեսակայունությունը, ՀՏԱ-ն և արժեքային համակարգը ադապտիվ ռազմավարությունների հետ՝ ընդգծելով տրավմայի դերը որպես հոգեբանական ռեսուրսների ձևավորման գործոն:

Եզրակացություններ

1. Սթրեսը բնութագրվում է որպես բարդ հոգեբանական, սոցիալ-հոգեբանական երևույթ, որն ազդում է անհատի վարքի վրա՝ խթանելով հարմարվողական կամ խուսափողական հակազդումներ:

2. Պատերազմը, որպես ծայրահեղ սթրեսոր, խոր ազդեցություն է թողնում անհատների և խմբերի վրա՝ առաջացնելով հետտրավմատիկ սթրեսային խանգարում, մինևույն ժամանակ խթանում սոցիալական համախմբվածությանը և արժեքային վերահիմաստավորմանը:

3. Հետզանավաճքային սթրեսային խանգարման հիմքում ընկած է տրավման, որն ազդում է ինչպես պատերազմի մասնակիցների հարմարվողականության ընթացքին, այնպես էլ կարող է խթանել հետտրավմատիկ անձնային աճին:

4. Պատերազմի մասնակիցների մոտ նկատվել են ինչպես բացասական (ՀՏՄ, սթրեսակայունության անկում), այնպես էլ դրական (ՀՏՄ, ունիվերսալիզմի բարձրացում) հետևանքներ՝ պայմանավորված տրավմայի բնույթով և սոցիալ-մշակութային, սոցիալ-քաղաքական համատեքստով:

5. Պատերազմի մասնակիցների խմբում գերակշռում են կառուցողական ռազմավարությունները (ինքնատիրապետում, դրական վերագնահատում), որոնք խթանվում են սթրեսակայունությամբ և հետտրավմատիկ անձնային աճով, բարձր սթրեսակայունություն ի տարբերություն պատերազմին չմասնակցածների մոտ սոցիալական աջակցության և խուսափողական մոտեցումների:

6. Հետտրավմատիկ սթրեսային խանգարումը, հետտրավմատիկ անձնային աճը և արժեքային կողմնորոշումները (օրինակ՝ ունիվերսալիզմ, կոնֆորմություն) էականորեն ազդում են պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների վրա, սակայն չմասնակցածների մոտ այդ ազդեցությունը սահմանափակ է:

7. Պատերազմի մասնակիցների սթրեսակայունությունը և հետտրավմատիկ անձնային աճը դրականորեն կապված են կառուցողական ռազմավարությունների հետ, մինչդեռ չմասնակցածների մոտ նկատվում են խուսափողական ռազմավարություններ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված հետևյալ հրապարակումներում՝

1. Ստեփանյան Լ., Հետվնասվածքային սթրեսի սոցիալ-հոգեբանական դրսևորումները, առանձնահատկությունները: Հոգեբանական հիմնախնդիրներ: Գիտական պարբերական N2 (2), (2022) Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, էջ 140-145, ISSN 2953-7924

2. Ստեփանյան Լ., Ավագիմյան Հ., Պատերազմի մասնակից կամավորների արժեհամակարգի և հաղթահարող ու ինքնավերահսկող վարքի ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտ., 1, ՎՊՀ, Վանաձոր 2023, էջ 449- 456, ISSN 2738-2915

3. Ստեփանյան Լ., Պատերազմի մասնակիցների տրավմատիզացիայի հիմնախնդիրը հոգեբանության մեջ: Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտություններ 1, ՎՊՀ, Վանաձոր 2023, էջ 477- 487, ISSN 2738-2915

4. Ստեփանյան Լ., Կոմբատանտի հոգեբանական հակազդման առանձնահատկությունները մարտական սթրեսի պայմաններում: Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտ., 2, ՎՊՀ, Վանաձոր 2024, էջ 228-235, DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.2-228>

5. Սարգսյան Լ., Ստեփանյան Լ., Հովակիմյան Գ., Պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական նույնականության տեսակի և սթրեսակայունության կապը: Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի: Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(69), Երևան, 2024, էջ 156-169, DOI: 10.51307/182931072015233260-24.69-156

6. Sargsyan L., Avagimyan H., Hovakimyan G., Stepanyan L., The impact of stress resilience of war participants on the attitude towards death., Katchar Scientific periodical, 2, 2024, p. 184-197, DOI: 10.54503/2579-2903-2024.2-184

7. Ստեփանյան Լ., Ավագիմյան Հ., Պետրոսյան Ա., Պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն, Կաճառ/Ակադեմիա, 2, Եր., 2025, էջ 20-32, DOI:10.54503/2579-2903-2025.2-20

8. Sargsyan L., Hovakimyan G., Stepanyan L., Petrosyan A., International Psychological Applications Conference and Trends (InPACT) 2025, Budapest, Hungary, pg. 566-570, ISBN: 978-989-35728-3-2

9. Ստեփանյան Լ., Ավագիմյան Հ., Կոմբատանտների կյանքի իմաստի կողմնորոշումների և քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, Անձի հոգեբանության արդիական հարցեր՝ ինքնություն և խնդիրներ միջազգային գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու, 2025 թ., ապրիլի 17-18, (Երևան, Հայաստան) Երևան, ՀՌՀ հրատարակչություն, էջ 19-30

10. Ստեփանյան Լ., Մարտական գործողությունների մասնակիցների հետտրավմատիկ անձնային աճի և բազային արժեքային կողմնորոշումների փոխադարձ կապը, Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտություններ 2, ՎՊՀ, Վանաձոր, 2025, էջ 262-270, DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-262>

СТЕПАНЯН ЛИЛИТ КАРОЕВНА
СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОПИНГ-
СТРАТЕГИЙ, ИСПОЛЪЗУЕМЫХ УЧАСТНИКАМИ ВОЙНЫ ПРИ
СТРЕССОВЫХ СОСТОЯНИЯХ.

Диссертация на соискание учёной степени кандидата психологических наук по специальности 19.00.03 «Социальная психология». Защита диссертации состоится 20-го февраля 2026 года в 15⁰⁰ на заседании специализированного совета 067 КВОН при Ереванском Государственном Университете (0025, г. Ереван, Абовяна 52а).

АННОТАЦИЯ

Актуальность исследования обусловлена тем, что рассматриваемая проблема способствует более глубокому пониманию процессов психологического восстановления участников войны, раскрывая механизмы их адаптации, совладания и преодоления трудных жизненных ситуаций. Анализ копинг-стратегий позволяет определить наиболее эффективные подходы с учетом индивидуально-психологических и социальных факторов.

Цель исследования – выявление социально-психологических особенностей копинг-стратегий участников войны в стрессовых ситуациях.

Основные задачи исследования:

1. Изучить природу стресса и посттравматического стрессового расстройства, его проявления и социально-психологические характеристики.
2. Проанализировать влияние войны как экстремально стрессогенного фактора на психологическое состояние личности и социальных групп.
3. Исследовать психологические и социальные последствия травматического опыта участников войны, включая проявления ПТСР и феномен посттравматического личностного роста (ПТР).
4. Определить особенности копинг-стратегий участников войны с учетом социокультурных и индивидуально-психологических факторов.
5. Провести ковариационный анализ для выявления влияния ключевых факторов на особенности копинг-стратегий участников войны.
6. С помощью корреляционного анализа установить взаимосвязи между стрессоустойчивостью, выраженностью ПТСР, ценностными ориентациями и используемыми копинг-стратегиями.
7. Разработать практические рекомендации, направленные на повышение эффективности психологической реабилитации и социальной адаптации участников войны.

Гипотеза исследования заключается в предположении, что копинг-стратегии участников войны отличаются от стратегий лиц, не принимавших участия в военных действиях. Эти различия детерминируются уровнем посттравматического стресса, выраженностью посттравматического роста, системой ценностных ориентаций и степенью стрессоустойчивости.

1. В связи с различиями в характере боевых действий копинг-стратегии участников войны демонстрируют существенные вариации.

2. Лица с высокими показателями посттравматического роста используют преимущественно адаптивные копинг-стратегии, такие как планирование решения проблем и позитивная переоценка.

3. Уровень стрессоустойчивости находится в прямой зависимости от частоты применения эффективных копинг-стратегий.

4. Выбор копинг-стратегий во многом определяется системой ценностных ориентаций участников войны.

Научная новизна исследования заключается в разработке нового подхода к изучению социально-психологических особенностей копинг-стратегий участников войны, основанного на учете специфики социокультурного контекста современной Армении. Впервые проведено сравнительное исследование копинг-стратегий участников различных военных конфликтов (в частности, Первой Арцахской войны, 44-дневной войны и др.), что позволило выявить влияние типа военного опыта на особенности совладания со стрессом.

Теоретическая и практическая значимость исследования состоит в углублении научных представлений о природе стресса и копинг-стратегий, с акцентом на социально-психологические особенности участников войны. Работа способствует развитию теоретических подходов к пониманию войны как экстремального стрессора, выявляя значение посттравматического стрессового расстройства (ПТСР) и посттравматического личностного роста (ПТР) в процессах адаптации и восстановления личности.

Практическая значимость исследования заключается в возможности применения его результатов при разработке и реализации программ психологической поддержки, ориентированных на реабилитацию и социальную адаптацию ветеранов боевых действий. На основе полученных данных предложены практические подходы к повышению стрессоустойчивости и развитию адаптивных копинг-стратегий, включая методы саморегуляции и позитивной переоценки.

Надежность и публичность исследования обеспечиваются анализом 188 научной работы современных ученых. Результаты диссертации были представлены в 10 научных публикациях и обсуждались на кафедре психологии имени академика М. Мазманяна АГПУ.

Структура диссертации: диссертация состоит из введения, двух теоретических глав анализа литературы, третьей главы, посвященной методологии исследования, результатов исследования, анализа и обсуждения, практических рекомендаций, заключений и списка использованной литературы (188 источник на армянском и иностранных языках). Диссертация включает 10 таблиц и состоит из 156 страниц.

По теме диссертации опубликовано 10 научных статей.

STEPANYAN LILIT KARO
THE SOCIO-PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF COPING
STRATEGIES USED BY WAR PARTICIPANTS IN RESPONSE TO STRESS

Dissertation submitted in fulfillment of the requirements for the degree of Candidate of Psychological Sciences in the speciality 19.00.03 "Social Psychology". The public defence of the dissertation will be held on 20 February 2026 at 15.00, at HESC 067 Degree-awarding Scientific Council session, at Yerevan State University (52a Abovyan Street, Yerevan0025).

ABSTRACT

The relevance of the research is grounded in the fact that the problem under investigation illuminates the psychological recovery processes of war participants, elucidating their coping and resilience mechanisms. The analysis of coping strategies facilitates the identification of approaches that are most effective, taking into account both individual and social factors.

The aim of the research is to examine the socio-psychological characteristics of war participants' coping strategies in stressful situations.

Research Hypothesis: The study hypothesizes that the coping strategies utilised by war participants are distinct from the coping strategies of individuals with no combat experience. These differences are accounted for by individual variations in post-traumatic stress, post-traumatic growth, value orientations, and stress resilience. Specifically:

1. Differences in exposure to combat are associated with significant variations in the coping strategies utilised by participants.

2. Participants exhibiting high post-traumatic growth display more adaptive coping strategies, including problem-solving planning and positive reappraisal.

3. The level of stress resilience is positively associated with the use of effective coping strategies.

4. War participants' value orientations act as a mediating factor in the choice of coping strategies.

The following research objectives are derived from the aim of the study:

1. To examine the nature of stress and post-traumatic stress disorder (PTSD), its manifestations and socio-psychological characteristics.

2. To analyse the impact of war as an extreme stressor on the psychological state of individuals and groups.

3. To examine the psychological and social consequences of trauma experienced by war participants, including post-traumatic stress disorder (PTSD) and post-traumatic-growth (PTG).

4. To elucidate the nature of coping strategies utilised by war participants, taking into account socio-cultural and individual factors.

5. To apply a covariate analysis (MANCOVA) to investigate the effects of various factors on the coping strategies of war participants.

6. To apply a correlational analysis to identify the relationships between stress resilience, post-traumatic growth (PTG), and value orientations, and their association with coping strategies.

7. To formulate practical recommendations to enhance the psychological rehabilitation and social support of war participants.

The Scientific Novelty of the Research:

The research introduces an innovative perspective through an examination of the socio-psychological characteristics of coping strategies among war participants within the distinctive socio-cultural framework of Armenia. For the first time, the research examines and compares the coping strategies of individuals involved in various military conflicts (the First Artsakh War, the 44-day War, etc.), highlighting the influence of war type on coping mechanisms. The research introduces novelty through the analysis of value orientations as mediators in the selection of coping strategies and contributes to a deeper understanding of the interconnection between post-traumatic growth and stress resilience.

The Theoretical Significance of the Research:

The research advances theoretical understanding of stress and coping strategies by examining the socio-psychological characteristics of war participants. It enhances insights into the effects of war as an extreme stressor, emphasizing the roles of post-traumatic stress disorder (PTSD) and post-traumatic growth (PTG). The study further contributes to the theoretical conceptualisation of the interconnection between value orientations and coping strategies within the context of Armenian society. It offers a framework for innovative perspectives on how traumatic experiences shape individual adaptive mechanisms. The theoretical significance is also reflected in the re-evaluation of the relationship between the consequences of trauma and psychological recovery.

The Practical Significance of the Research:

The findings of the research provide a foundation for the development of psychological support programmes aimed at the rehabilitation of war participants. They offer practical solutions for enhancing stress resilience and promoting adaptive coping strategies, such as self-regulation and positive reappraisal. The results may inform the design of educational initiatives that raise public awareness of psychological health, as well as the development of socio-psychological support programmes to facilitate the reintegration of war participants into society. The practical significance also extends to informing public policy, contributing to the improvement of both the accessibility and quality of psychological services within the context of military and socio-psychological rehabilitation.

